284 Տխրել էր հոգիս ամայության մեջ,

1. Տխրել էր հոգիս ամայության մեջ,
Արցունքս էր իջնում անվերջ ու անվերջ,
Մի սպիտակ ձեռք ինձ լուռ մոտեցավ,
Սրբեց աչքերս և ուրախացավ: (2)

«Գտնվեցիր դու, կորա՛ծ Իմ գառնուկ,
Փնտրում էի Ես քեզ վաղուց, շա՛տ վաղուց,
Կտամ Ես քեզ տուն և ուրախություն,
Որ չես ունեցել նույնիսկ դու մանկուց»:

2. Աչքերս բացեցի, տեսա Հիսուսին,
Տեսա Աստծո Գառին ու Լույսին,
Սուրբ Հոգին տիրեց, խավարը անցավ,
Գիշերվա մութը իսպառ վերացավ: (2)

3. Երգը շուրթերիս ելա Գողգոթա,
Այնտեղ Հիսուսով փրկություն գտա,
Խաչի վրայից շշնջաց սիրով.
«Մեռա քեզ համար, ապրիր ապահով»: (2)

4. Ես թոթափեցի իմ վերջին բեռը,
Պարտվեց այնտեղ չար անօրենը,
Երգեցի օրհներգ Իր մեծ հաղթության,
Հաղթանակ տարա արյունով Գառան: (2)